ՇՆՈՐՀԱՎՈՐ ԾՆՆԴՅԱՆԴ ՕՐԸ... ՌԱԶՄԻԿ

Առանց խմբագրման

«Ես չեմ գա... Ինձ կբերեն»:

Դու գիտեիր, որ չես վերադառնալու... Գիտեիր, բայց չկարողացար չգնալ:

Դու Երևան էիր ուղեկցել 2-րդ վաշտի հրամանատարի տեղակալ զոհված Վաղինակ Երանոսյանին և ծանր վիրավոր 2-րդ վաշտի հրամանատար Կամո Ծատուրյանին: Եվ շատ ծանր այդ պատերազմի ահեղ պահերին, արդեն որպես 2-րդ վաշտի հրամանատար, դու էիր, որ չլքեցիր ոչ քո մարտական ընկերներին, ոչ քո ՀԱՅՐԵՆԻՔԸ:

Այո, *«քեզ բերեցին»:*

Ի՞նչ գրեմ քո վերադարձի մասին. ծանր է, չեմ կարող նկարագրել ոչ մեկի վիշտը... բայց, որպես ամբողջ կյանքում այրող մրմուռ, մի հուշ կմնա եղբորդ (հետագայում մեզ շատ հարազատ ընկեր) Դերենիկի քեզ հրաժեշտի դողը, փոքր տղայիդ մեծ «ուրախությունը», որ դու եկել ես, ախր նա շատ փոքր էր և չէր հասկանում, որ դու չես եկել, այլ քեզ *«բերել են»:*

Հուլիսի 31-ին քո ծննդյան 35-ամյակն է: Հրավիրված են ճակատագրի բերումով կենդանի մնացած քո մարտական ընկերները, ի դեպ, համարյա բոլորը վիրավոր և ես, որպես պատերազմի ուժեղ թիկունք, քանի՞ անգամ եմ ձեզ մարտադաշտ ճանապարհել, քանի՞ անգամ եմ դիմավորել: Ամեն ձեր մարտադաշտ գնալու օրը, հիշում եմ, եկեղեցի էի գնում ձեր բարի վերադարձի մոմերը վառելու: Լինում էր, որ ժամերով լաց էի լինում եկեղեցու դռանը, չէի կարողանում եկեղեցու դռնից ներս մտնել...

Եվ դիմավորում էի բոլորիդ, պատերազմ էր և հաճախ...

Քո ծննդյան օրն է: Ես գիտեմ, որ մեզ լավ կդիմավորեն, ես գիտեմ, որ սպասված հյուրեր ենք: Ախր ոչ թե չեմ կարող ես քո շեմից ներս մտնել, այլ ոչ մի շնորհավորանքի խոսք չունեմ ասելու, որ սփոփանքի խոսք չունեմ ասելու քո հարազատներին (ես գիտեմ, որ քո հարազատները ամեն անհնարինը կանեն մեզ ուրախ դիմավորելու, գիտեմ, որ կժպտան, կծիծաղեն, սակայն...):

Չէ, չէ, չեմ գա, այլ կբարձրանամ Եռաբլուր քո շիրիմին ու կգնամ մենակ, ինչպես ամեն անգամ, ես ուզում եմ մենակ լինել ձեզ հետ, ինձ համար հեշտ է մենակ տանել իմ վիշտը ու ամեն անգամ Եռաբլուր մտնելիս ես առանձնանում եմ բոլորից, որ բոլորիդ այցելեմ, որ ոչ մեկիդ չվրիպեմ, ես գիտեմ, որ դուք ինձ սպասում եք, իսկ ես կարոտում եմ ձեզ:

Եռաբլուր... Շատ ծանր է Եռաբլուրում, ինչքան տարիների հետպատերազմյան խորքն եմ գնում, այնքան ավելի եմ ձեզ կարոտում... Ինչքան տարիները հող են ավելացնում ձեր շիրիմներին, այնքան ավելի է իմ վիշտը, հիշողությունները ծանրանում, կարծես ձեր շիրիմների հողն իմ սրտին է նստում:

Եռաբլուր՝ շատ ծանր է, բայց չեմ կարող չայցելել...

Մեր «Երևանի գումարտակ», որն ստեղծվեց շատ ծանր պատերազմական իրադրությունում, ստեղծվեց պատերազմելու, ստեղծվեց հաղթելու, և, ավա՜ղ նաև զոհվելու համար:

Եռաբլուրն ինձ համար սկսվում է Հակոբջանով Բորյայով՝ իմ առաջին հրամանատարով, Ասատրյան Ռազմիկով, Հունանյան Մանվելով, և, ապա շարունակվում բոլորով և վերջանում Խալաթյան Հայկարամով վերջին մեր զոհով:

Փա՜ռք ձեզ, բարի հիշատակ, շնորհավոր ծնունդդ, *ՌԱԶՄԻԿ...*

ԱՆԱՀԻՏ ՔՈՉԱՐՅԱՆ, *ենթասպա*